

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՎՐՅՅԱՆԻ «ՀԱՄՇԵՆԸ ԵՎ ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԳՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին տարիներին համայն հայության շրջանում նկատելի է պատմական Համշենի և համշենահայության խնդիրների նկատմամբ հետաքրքրության աճ: Չնայած սույն թեմայի շուրջ նախորդիվ կատարված աշխատանքներին, այնուամենայնիվ համշենահայերի որոշ հիմնախնդիրներ դեռ կարոտ են ուսումնասիրության: Նկատի առնելով Սփյուռքի և Հայաստանի հայությանը խիստ հետաքրքրող սույն թեմայի բազմաթիվ հարցերը՝ 2016 թ. վերջերին ՀՀ Սփյուռքի նախարարության հովանավորությամբ Երևանում լույս տեսավ Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն, հայագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Հայկազուն Ավրյանի «Համշենը և համշենահայությունը. արդի հիմնախնդիրները» գիրքը (պատասխանատու խմբագիր՝ թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անույան, «Էդիտ պրինտ» հրատարակչություն, 152 էջ):

Աշխատության մեջ ներկայացվում են Համշենի և համշենահայության համառոտ պատմությունը և արդի հիմնախնդիրները, որոնք կարող են հետաքրքրել ինչպես մասնագետներին, այնպես էլ՝ ընթերցողների լայն շրջանակի: Գիրքը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, որոնք էլ իրենց հերթին բաժանված են ենթագլուխների, և վերջաբանից:

Ինչպես ներածության մեջ իրավամբ նկատում է հեղինակը. «Ազգային պետականության բացակայության պայմաններում ինքնության հիմնական ցուցիչ համարվող կրոնից, դավանանքից և եկեղեցուց բռնի հեռացումը դարերի ընթացքում ավերիչ հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի այս հատվածի վրա: Իսլամացված հատվածը ոչ միայն հեռացավ իր եկեղեցուց, այլև աստիճանաբար կորցրեց լեզուն, մշակույթի, սովորույթների և ավանդույթների մի մասը»:

«Համշենի իշխանության ձևավորումն ու վերելքը» վերնագիրը կրող առաջին գլխում հեղինակն անդրադառնում է նախքան 8-րդ դարը Պոնտոսում հայերի առկայության, 8-րդ հարյուրամյակում Հայաստանից դեպի Պոնտոս հայերի մեծ արտագաղթի, Բյուզանդական կայսրության կազմում Համշենի իշխանության ստեղծման, 9-10-րդ դարերում Բագրատունիների թագավորության, իսկ 13-15-րդ դարերում Տրապիզոնի կայսրության կազմում Համշենի իշխանության գոյատևման և հետագայում Համշենի իշխանության անկման պատմությանը:

«Օսմանյան կայսրության իսլամացման քաղաքականությունն ու Համշենի պայքարը ինքնության պահպանման համար 15-19-րդ դարերում» վերնագրով երկրորդ գլխում հեղինակը Համշենի հա-

յության իսլամացման պատմությունը բաժանում է հետևյալ 4 հիմնական փուլերի. առաջին փուլ՝ 16-րդ դարի վերջեր-1722 թ., երկրորդ փուլ՝ 1722 թ.-1838 թ., երրորդ փուլ՝ 1838 թ. մինչև 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, չորրորդ փուլ՝ 1915-1930-ական թթ.:



Հեղինակը նաև առանձին գլխում է անդրադառնում Մեծ եղեռնի տարիներին Համշենի հայության վիճակին: «Հայոց ցեղասպանությունը և համշենահայերը» վերնագրված երրորդ գլխում նրա կողմից անդրադարձ է կատարվում 1915-1923 թթ. համշենահայության զինված պայքարին: Այս գլխում գետնված է նաև Տրապիզոնի հայության կոտորածների վերաբերյալ օսմանյան երկու կարևոր փաստաթուղթ: Սույն վավերագրերից մեկը Կոստանդնուպոլսի ռազմական արտակարգ ատյանում 1919 թ. մարտի 26-ից մայիսի 20-ն իրականացված՝ Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարության ամբաստանագիրն է, իսկ մյուսը՝ նույն դատաքննության արդյունքում կայացված դատավճիռը:

«Համշենահայերի համայնքների ձևավորումը Ռուսական կայսրությունում և նրանց հետագա վիճակը ԽՍՀՄ-ում» վերնագրով չորրորդ գլխում Հայկազուն Ավրյանը մանրամասն ներկայացնում է 19-րդ դարում քրիստոնյա համշենահայերի մի մասի՝ դեպի Ռուսական կայսրություն կատարած գաղթը, Ռուսաստանում ու Աբխազիայում առաջացած համշենահայ համայնքների կրթական, մշակութային և եկեղեցական կյանքը: Առանձին ենթագլխում հատուկ անդրադարձ է կատարվում նաև Ռուսաստանում և Աբխազիայում հայության զանգվածային լրատվամիջոցներին:

Վերջին՝ հինգերորդ գլխում, որը կրում է «Տեղեկություններ կրոնափոխ համշենցիների վերաբերյալ» վերնագիրը, հեղինակն անդրադառնում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում ապրող իսլամացած համշենահայերի կամ հեմշիլների բնակության վայրերին և ենթախմբերին, կրոնափոխ համշենահայերի թվին և ներկայիս դրությանը, վերլուծում է կրոնա-

փոխ համշենցիների ինքնության խնդիրը և ներկայացնում թուրքական պաշտոնական պատմագրության կողմից համշենահայերի պատմությունը խեղաթյուրելու փորձերը:

«Վերջաբանի փոխարեն» վերնագրված ամփոփման մեջ հեղինակը ներկայացնում է «Այս» շաբաթաթերթում լույս տեսած՝ կրոնափոխ համշենահայերի մասին երկու օսմանյան պաշտոնական փաստաթուղթ, որոնցում արձանագրվում է համշենցիների հայկական ծագումը:

Կրոնափոխ համշենցիներին առնչվող ամենաարդիական խնդիրը, թերևս, ինքնության հարցն է, որի վերաբերյալ Հայկազուն Ավրյանը նշում է. «Համշենցիների մեջ այս հարցում գոյություն ունի երեք հիմնական մոտեցում»:

Առաջին տեսակետի հետևորդները իսպառ ժխտում են իրենց հայկական անցյալը և պաշտպանում հեմշիլների օղուգթուրքական ծագումը: Այս տեսակետի պաշտպանները ոչ թե չգիտեն իրենց իրական ծագման մասին, այլ պարզապես տարբեր պատճառներով չեն ուզում նոր խնդիրներ ունենալ: Նրանք իրենց ամբողջությամբ համարում են թուրք-իսլամական մշակույթի արդյունք: Անգամ ցեղասպանության տարիներին կամ դրանից հետո իսլամացած բազմաթիվ հայեր ուղղակի չեն ցանկանում վերհիշել իրենց հայկական անցյալի մասին, քանզի այն իրենց բերել է միայն դժբախտություն: Մի երկրում, ուր հայ կամ ցավուր լինելը գրեթե հավասարեցվում է պետական դավաճանության, նման կեցվածքը լիովին հասկանալի է:

Երկրորդ տեսակետի կողմնակիցներն առավել չափավոր են, զգուշավոր: Նրանք ընդունում են, որ իրենց նախնիները հայեր են եղել, բայց կարծում են, որ դա պատմություն է, որին անդրադառնալու անհրաժեշտություն այսօր չկա: Այդ մտայնությունը բավականին ընկալելի է ձեռակերպել Համշենական մշակույթի ուսումնասիրության և պահպանության «Հատիկ» միության ներկայացուցիչ Հիքմեթ Աբջիչեքը. «Թուրքիայում ապրող համշենական համայնքի մի կարևոր զանգված, մերժելով իր հայկական արմատները, էթնիկական տեսանկյունից իրեն համարում է թուրք ժողովրդի մի մասը: Նրանց համար հայերը հնում հարևան եղած, իսկ ավելի հազվադեպ էլ ամուսնության ձանապարհով բարեկամ դարձած մի հանրություն են: Իսլամացած հայեր լինելու գաղափարն ընդունող համշենցիների համար էլ, որպես պատմական, սոցիալական և քաղաքական պայմանների անհրաժեշտ հետևանք, այսօր հայկական ինքնության մասին խոսելը շատ իրատեսական չէ: Եւ հայկական ինքնությունն ընդունողների, և այն ժխտողների համար այսօր համշենական ինքնությունն ավելի գերակա է»:

Երրորդ տեսակետի հետևորդներն այն կարծիքին են, որ իրենց նախնիները

եղել են հայ քրիստոնյաներ, որոնց բռնի կերպով իսլամացրել են: Որքան էլ իրենք շատ բան են կորցրել իրենց հայկական ինքնությունից, սակայն իրենց համարում են հայ՝ մահմեդական հայ: Այս հարցում էլ ուշագրավ է Մահիր Օզբանի տեսակետը, որը բավականին թարմ է ինքնատիպ մոտեցում է. «Չնայած կրոնական տարբերություններին՝ կան բազմաթիվ ավանդույթներ, տոներ, նախաքրիստոնեական ժամանակից մնացած աղոթքներ, հավատալիքներ և մշակութային տարրեր, որոնք համշենական ու հայկական ինքնությունները բավականին մերձեցնում են: Այս իրավիճակը մի կողմից՝ համշենցի թուրքի ընկալման ազդեցությունն է նվազեցնում, մյուս կողմից՝ հետ է մղում քրիստոնեության հետ նույնականացվող հայկական ինքնության ընկալումը: Մեկը մյուսից սկիզբ առնող այս գործընթացը համշենցի թուրք կամ հայ դրանմե հասկացության փոխարեն տարածում է մուսուլման հայի ընկալումը»: Հաճախ առիթ եմ ունեցել ինքնության հարցի շուրջ գրուցելու կրոնափոխ համշենցիների հետ, որոնց մեջ ունեմ ընկերներ եւ բարեկամներ՝ երեք խմբերից էլ: Նրանցից ոմանք այն համոզմունքն ունեն, որ հայ հետազոտողները նրանց, իրենց կամքին հակառակ, հայ են համարում, այդ մասին գրում են, տարածում: Իմ այդ բարեկամներին ցանկանում եմ ասել հետևյալը. Համշենի եւ համշենցիների հարցերով զբաղվող հայ հետազոտողների խնդիրը բոլորովին այլ է (խոսքս պարզունակ եւ անպատասխանատու վայ-քարոզիչների մասին չէ): Մենք ունեցել ենք մեկ ընդհանուր անցյալ, պատմական ինչ-ինչ հանգամանքներում կրոնական, մշակութային, լեզվական օտարացման հետեւանքով դադարել ենք իրար ճանաչել, բայց դա չի նշանակում, որ մեր ընդհանուր եւ նույն պատմության շրջանը գոյություն չի ունեցել: Հայ հետազոտողները, ուսումնասիրելով այդ խնդիրները, ուսումնասիրում են հայ ժողովրդի այդ շրջանի պատմության մեկ հատվածը: Եթե հետազոտությունները բերում հասցնում են մեր օրերը, դա էլ է օրինաչափ, բայց բոլորովին չի նշանակում, որ այդ մարդիկ ձեզ համարում են հայ: Միայն դուք կարող եք որոշել, թե ինչ ազդի եք պատկանում, ինչ ինքնության կրողներ եք, այնպես, ինչպես յուրաքանչյուր մարդ՝ որեւէ հանրության մեջ»:

Այսպիսով՝ Հ. Ավրյանի «Համշենը և համշենահայությունը. արդի հիմնախնդիրները» գիրքը էական ներդրում է համշենագիտության ոլորտում: Կարծում ենք, որ կարևոր է սույն աշխատությունը թարգմանել այլ լեզուների, հատկապես՝ թուրքերենի, ռուսերենի և անգլերենի:

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ
Թուրքագետ, պատմական
գիտությունների թեկնածու

ՆԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՐՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՏԿԱՌԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱԽՈՍ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ



Արև Վիկտորի Բալայանը ծնվել է 1978 թ. Երևանում: 1995 թ. ավարտել է Երևանի Միամանթոյի անվան թիվ 162 միջնակարգ դպրոցն արժաթե մեդալով: Նույն թվականին ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տարրական ուսուցման մեթոդիկա և մանկավարժություն ֆակուլտետ և 1999 թ. ավարտել գերազանցությամբ:

1999-2002 թթ. աշխատել է Երևանի թիվ 191 միջն. դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, դասղեկ: 2002-2003 ուստարում աշխատել է Անանիա Շիրակացու անվան կրթահամալիրում՝ որպես դասվար և 2002-2009 թթ. համատեղել աշխատանքը «Ալմիկ» ուսումնական կենտրոնում՝ որպես փոխտնօրեն:

2009-2016 թթ. աշխատել է Միամանթոյի անվան թիվ 162 հիմնական դպրոցում՝ որպես կրտսեր դպրոցի փոխտնօրեն՝ ուսումնական գծով:

Մանկավարժական գործունեության ընթացքում արժանացել է տարբեր պարգևների:

2014 թ. մասնակցել է ՀՀ ԿԳՆ և Հայ առաքելական եկեղեցու կողմից անցկացվող «Տարվա լավագույն ուսուցիչ» առարկայական մրցույթին և զբաղվել 3-րդ մրցանակային տեղը:

2016 թ. հուլիսից ընտանիքի հետ բնակվում է ՌԴ Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ քաղաքի Ռասկայա գյուղավանդում: 2016 թ. սեպտեմբերից աշխատում է ՌԴ Կրասնոդարի երկրամասի «Լույս» ՀԿ-ում՝ որպես հայոց լեզվի ուսուցչուհի, դասավանդում է հայոց լեզու Ռասկայա գյուղական թիվ 24 դպրոցում: 2017 թ. հունվարից համատեղության կարգով աշխատում է նաև նույն գյուղական թիվ 6 մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի:

Հայոց լեզվի տարրական ուսուցումը հայրենիքում և նրա սահմաններից դուրս մեթոդապես խիստ տարբեր է, և պատճառն ունի օբյեկտիվ ու սուբյեկտիվ հիմքեր: Տարբեր է նաև սփյուռքի զանազան հատվածներում հայերենի ուսուցման տարրական մեթոդիկան, ինչը պայմանավորված է ոչ միայն տվյալ երկրի պե-

տական լեզվի և հայերենի հնչյունային կազմի, քերականական կառուցվածքի համահունչությամբ, այլև տվյալ տարածաշրջանում հայկական համայնքի կրթական, հոգևոր, հասարակական գործունեություն իրականացնող կառույցների ակտիվ գործունեությամբ: Կարևոր դերակատարում ունեն նաև ուժացմանը նպաստող այլ պայմանները:

Կրասնոդարի երկրամասում ունենալով հայկական մեծ համայնք՝ 280 հազարից ավելի հայ բնակչություն, այնուամենայնիվ այսօր չկա հայկական հանրակրթական դպրոց: Հայերեն լեզվի ուսուցումն իրականացվում է հայկական հասարակական, բարեգործական կազմակերպությունների, եկեղեցու միջոցներով, երբեմն նաև անվճար հիմունքներով մեկօրյա ուսուցման, ֆակուլտատիվ դասընթացների, եկեղեցուն կից կիրակնօրյա հանդիպումների տեսքով, որոնք անցկացվում են պետական դպրոցներում կամ վարձակալված տարածքներում: Կրասնոդար քաղաքում «Արմատ» դպրոցը, բարերանների շնորհիվ, արդեն գործում է մեծ և բարեկարգ շենքում, որտեղ հայ երեխաները ուսանում են ոչ միայն հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն, այլև ստանում գեղագիտական դաստիարակություն, սովորում նվագել հայկական նվագարաններ, պարել հայկական ազգային պարեր:



Ռասկայա գյուղականի աշակերտները հայերեն թռչնագիր տառերով բացիկներ են պատրաստել

Կրասնոդար քաղաքում գտնվող Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի երկրամասի տարածաշրջանային բաժանմունքի կրթության բաժինը համագործակցում է երկրամասի տարբեր քաղաքների հայկական համայնքներում իրականացվող կրթամշակութային կենտրոնների, հասարակական կազմակերպությունների հետ, կազմակերպում հայոց լեզվի օլիմպիադա, անցկացնում վարպետաց դասեր հայոց լեզու դասավանդող ուսուցիչների համար:

Նովոռոսիյսկը Կրասնոդարի երկրամասի խոշոր քաղաքներից է, որտեղ բնակվում է 12 092 հայ (2002 թ.): Հայ համայնքի հասարակական և մշակութային կյանքի կազմակերպմամբ է զբաղվում Ռուսաստանի հայեր միության Կրասնոդարի երկրամասի մասնաճյուղ «Լույս» հասարակական կազմակերպությունը:

չի ապրում հայկական ազգային ավանդույթներով: Երրորդ սերնդի շրջանում մեծ թիվ են կազմում խառնամուսնությունները:


Վերջին 30 տարիներին Նովոռոսիյսկում վերաբնակված հայերի զգալի մասը Արցախից են, Վրաստանից և, համեմատաբար ավելի քիչ՝ Հայաստանից: Հայերենի իմացությունը հիմնականում բարբառային է, ինչը նույնպես խոչընդոտում է մայրենիով շփմանը:

Արտագաղթի ավելացումը լրացնում է ուսուցիչների պահանջարկը սփյուռքում, այդուհանդերձ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայոց լեզու դասավանդող 10 ուսուցիչ համապատասխան մասնագիտական կրթություն ունի ընդամենը 2-ը: Ինչպես նաև ուսուցչական կազմը հաճախ է փոփոխման ենթարկվում չնչին աշխատավարձի պատ-

ճառով: ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման դասընթացները նպաստում են հայերենի դասավանդման որակի բարձրացմանը, ինչպես նաև Հայաստանից փոխանցվող մասնագիտական, գեղարվեստական գրականության, դասագրքերի, նաև էլեկտրոնային ուսումնական նյութերի տրամադրումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին հնարավորինս խորը և բովանդակալից դասեր վարել: Յուրաքանչյուր տարի երկրամասում անցկացվող տարածաշրջանային համաժողովին հայոց լեզվի ուսուցիչները ՀՀ սփյուռքի նախարարության ներկայացուցիչներին ներկայացնում են ուսուցման հիմնախնդիրները, առաջարկում դրանց լուծման ուղիները, ստանում մեթոդական աջակցություն, ծանոթանում սփյուռքի նախարարության կրթական ծրագրերին, մասնակցում տարաբնույթ մրցույթների:

2016 թ. նոյեմբերի 28-29-ին Կրասնոդար քաղաքում անցկացված «ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՌՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՌԻԱԿԱՆԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ» խորագրով տարածաշրջանային համաժողովին երկրամասի տարբեր քաղաքներից ժամանած հայոց լեզվի ուսուցիչները փաստեցին, որ լեզվի ուսուցման արդյունավետությունը ցածր է մի շարք պատճառներով.

- ✓ շաբաթական քիչ ժամաքանակը. ուսումնական տարվա կտրվածքով հանդիպումների քանակը չի գերազանցում 34-ը, ինչի հետևանքով կրտսեր դպրոցական տարիքի համար այբբենական շրջանը երկարացվում է 1, երբեմն 1,5 ուսումնական տարի:
- ✓ հայերենի ոչ պարտադիր ուսումնական առարկա լինելը աշակերտների մեջ ձևավորում է իմիջիայլոց վերաբերմունք դասընթացի նկատմամբ. աշակերտների հաճախումը անկանոն է, պատրաստվածությունը դասին՝ ցածր: Աշակերտների անկանոն հաճախմանը նպաստում է նաև տարածաշրջանի փոփոխուն և քմահաճ եղանակը:
- ✓ աշակերտների անկանոն հաճախու-



մը խոչընդոտում է ուսուցչի աշխատանքը, ստիպում աշխատել ենթախմբերով՝ լրացնելու բաց թողած ուսումնական նյութը:

- ✓ սակավաթիվ աշակերտների մասնակցությունը դասընթացին պատճառ է դառնում խառը տարիքային խմբի ձևավորման:
- ✓ միևնույն խմբում ընդգրկվում են հայոց լեզվի իմացությամբ տարամակարդակ աշակերտներ:
- ✓ դասընթացի հանդիպման օրերը հիմնականում նշանակվում են երեխաների հանգստյան օրերին, ինչը դժկամությամբ են ընդունում թե՛ աշակերտները, թե՛ ծնողները:
- ✓ նախադպրոցական հաստատություններում չի իրականացվում հայերեն բանավոր խոսքի զարգացում, դպրոցական տարիներին երեխայի ականջին խորթ է դառնում մայրենի՝ հայերեն լեզուն, դիտարկվում է որպես օտար լեզու: Հայերեն լեզվի դասընթացին հաճախող երեխաների 70%-ը չի տիրապետում հայերենին, առօրյա կենցաղային խոսքը զարգացած չէ:
- ✓ ՈՂ-ում տպագրված հայերենի ուսուցման ձեռնարկները աշակերտները ձեռք են բերում վճարովի հիմունքով, ինչը ոչ բոլորին է մատչելի:
- ✓ ՀՀ-ում սփյուռքի համար կազմված դասագրքերը նախատեսված են հանրակրթական դպրոցի ուսումնական առարկայի ուսուցման համար շաբաթական նվազագույնը 5 ժամ ուսուցմամբ հստակ տարիքային խմբի համար, ինչը, ցավոք, կիրառելի չէ:
- ✓ խառը տարիքային խմբի հետ հնարավոր չէ աշխատել միևնույն դասագրքով:

Սփյուռքում հայոց լեզվի տարրական ուսուցման դասընթացի գերխնդիրն է ոչ միայն գրաձանաչ դարձնել հայ երեխաներին, այլև զարգացնել նրանց բանավոր խոսքը, հարստացնել առօրյա բառապաշարը, ծանոթացնել ազգային ավանդույթներին, մշակույթին և պատմությանը: Երկարամյա փորձ ունեցող ուսուցիչները նշում են, որ թեպետ երեխաները դառնում են գրաձանաչ, սակայն չեն խոսում հայերեն: Պատճառը հայերենով շփման սահմանափակ հնարավորություններն են, ինչպես նաև ուսուցման պայմաններին համապատասխանող դասագրքերի, ուսումնական օժանդակ ձեռնարկների սակավությունը: Հաշվի առնելով երեխաների ռուսախոս միջավայրում գտնվելը՝ անհրաժեշտություն է առաջանում հարստացնել բառապաշարը առօրյա հաղորդակցական բառերով: Այդ նկատառումից ելնելով, հենվելով անձնական մանկավարժական փորձի վրա՝ տեղացի հայ մանկավարժներից շատերը կազմում են տարբեր ձեռնարկներ՝ օգտագործելով այնպիսի մեթոդներ, որոնք էապես տարբերվում են հայրենիքում կիրառվող հայոց լեզվի տարրական ուսուցման հնչական մեթոդից: Եվ դա ունի, ըստ հեղինակների, իր բացատրությունը. տարիների աշխատանքային փորձը ստիպում է մանկավարժներին գտնել առավել դյուրին եղանակներ և մեթոդներ հայոց լեզվի՝ որպես երկրորդ՝ մայրենի լեզվի ուսուցման: Գործող ուսումնական ձեռնարկներից են Երազիկ Հարությունյանի «Փոքր Միեր» և «Մեծ Միեր» գրքերը, Կարինե Եսայանի «Հանրագիտակ այբբենարան»-ը և Կարինե Կատանյանի «Սասունցի Դավիթ» այբբենարանը:




Երազիկ Հարությունյանի «Փոքր Միեր» ուսումնական ձեռնարկը (Еразик Арутюнян, Младша́й Мге́р. Учебное пособие по армянскому языку для русскоязычных учеников дошкольного младшего школьного возраста, Краснодар, 2012, 150 стр., ул.) նախատեսված է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար:



րոցական տարիքի երեխաների համար: Ձեռնարկում հիմնական շեշտը դրված է հնչյունների ճիշտ արտասանության և բառապաշարի հարստացման վրա: Օգտագործվում է հնչյունների հայերեն և ռուսերեն տառերի տարբերակների զուգակցում, որոշ հայերեն հնչյունների համար օգտագործվում է տառաձայնություն: Ձեռնարկը բովանդակում է 25 դաս, բառարան, ձեռնարկով աշխատելու մեթոդական ուղեցույց, ինչպես նաև քերականական կանոններ, 1-8 հավելված բաժիններ: Ձեռնարկին կից առաջարկվում է խոսակցական, որի նպատակն է զարգացնել աշակերտների հայերեն խոսքը ճիշտ ընկալելու և վերարտադրելու կարողությունը: Հաջորդ տարիքային խմբերի՝ հայոց լեզվի ուսուցման համար հեղինակն առաջարկում է «Մեծ Միեր» հայոց լեզվի ուսումնական ձեռնարկը նախատեսված մեկօրյա (կիրակնօրյա) հայկական դպրոցների միջին և ավագ խմբերի ռուսախոս աշակերտների համար (Еразик Арутюнян, Старша́й Мге́р. Учебное пособие по армянскому языку для русскоязычных учащихся средних и старших групп воскресных армянских школ, Ереван, 2014, 176 стр.): Այն բաղկացած է 30 դասից և 164 դասաժամից:

Կարինե Եսայանի «Հանրագիտակ այբբենարան» հայոց լեզվի ուսուցման և



խոսքի զարգացման համար (Карине Есаян, ЭНЦИКЛОПЕДИЧЕСКАЯ АЗБУКА. Учебное пособие для армянского языка и развития речи, Краснодар, 2013, 200 стр.) համալիր ուսումնական ձեռնարկը այբուբենի և հայրենագիտական գիտելիքների, բառապաշարի հարստացման նպատակով մի շարք թեմաների բառաֆոնդի միասնություն է: Այդ ձեռնարկը նախատեսված է շաբաթական 3-ժամյա ուսուցմամբ 3 ուսումնական տարվա համար: Ըստ հեղինակի, այն հասցեագրված է «տարրական և միջին դասարանի երեխաների համար: Ձեռնարկը մատչելի է նաև բարձր դասարանի երեխաների, ինչպես նաև ծնողների համար»: Հեղինակն օգտվել է Պ. Բեդիրյանի մշակած տառադարձություններից, սակայն «գրքի վերահրատարակվող տարբերակում դրանք հանվելու են», մեր գրույցում ասաց հեղինակը: Հնչյուն-տառի ուսուցումն իրականացվում է հնչյունային մեթոդով, զուգահեռ տալով տառադարձությունը, առաջարկվում են բառեր, որոնցում առկա է տվյալ հնչյուն-տառը: Առկա են տառի տպագիր և ձեռագիր նմուշները: Տրվում են պարզ նախադասություններ, ապա առաջարկվում է ռուսերեն նախադասությունները թարգմանել հայերեն (տե՛ս էջ 33), աստիճանաբար մեծանում է հայերեն ընթարցանության բնագրերի ծավալը: Գաղափար է տրվում խոսքի մասերի վերաբերյալ: Ձեռնարկի վերջին բաժնում տրվում են իրավիճակային երկխոսության հարցեր ու պատասխաններ: Աշակերտների գեղարվեստական խոսքը հարստացնելու նպատակով ձեռնարկում տեղ են գտել առած-ասացվածքներ, հայ մեծանուն մտավորականների կենսագրական տեղեկություններ: Որոշ բնագրերում անծանոթ տառերը փոխարինվում են վանդակով: Ձեռնարկին կից գործում են աշխատանքային տետրեր, որոնք նպաստում են աշակերտի գրավոր խոսքի, լեզվական գիտելիքների զարգացմանը:

Աշակերտների ընդհանուր բառապաշարի զարգացման նպատակով հեղինակն ընդգրկել է տարբեր թեմաներ: Կարևորելով հայրենասիրական դաստիարակության ապահովումը, անդրադարձել է հայ ժողովրդի պատմության փառավոր էջերին, մեծանուն գործիչներին և հայ ժողովրդի ձեռքբերումներին:

Կարինե Կատանյանի «Սասունցի Դավիթ» այբբենարանը (Карине Катанян, Азбука армянского языка «Сасунци Давид», Краснодар, 2015, 104 стр.) նախատեսված է «8-15 տարեկան երեխաների հայոց լեզվով գրելու և կարդալու կարողությունների ձևավորման համար: Այն ընդգրկում է 12 դաս՝ յուրաքանչյուրը 2-3 դասաժամ տևողությամբ:

Ընդամենը 36 դասաժամի ընթացքում հասնում ենք վարժ գրել-կարդալու ունակությունների հիմնավորման»: Ըստ հեղինակի, «գրքում օգտագործված մեթոդը նորություն է տառուսուցման ասպարեզում. նոր տառերը ուսուցանվում են մեկ բառի միջոցով, որը խթանում է պատկերային մտածողությունը և մասերը ամբողջի միջոցով ընկալելու կերպը»: Ըստ էության, հնչյուն-տառի ուսուցումն իրականացվում է ոչ թե հնչյունից դեպի տառ մեթոդով, որը համարվում է մեր այբուբենի առավելությունը, այլ հակառակը, տառից դեպի հնչյուն. ցուցադրվում է բառի տառային տարբերակը, վերլուծում այն ըստ տառ-հնչյունների, ապա ուսուցանվում բոլոր տառերը:

Վերը նշված ուսումնական ձեռնարկները ստեղծվել են հեղինակների երկարամյա աշխատանքային փորձի արդյունքում արդյունավետ մեթոդների որոնման և կիրառման հիման վրա, ինչը բարձր է գնահատվել՝ 2016թ. Երազիկ Հարությունյանը պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով, իսկ Կա-



րինե Եսայանն ու Կարինե Կատանյանը՝ ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալներով:

Աշխատելով մեկօրյա ուսուցմամբ ծրագրով՝ ուսուցիչները շարունակում են կիրառել տարբեր՝ հայրենական և տեղացի հեղինակների կազմած այբբենարաններ և ուսումնական ձեռնարկներ՝ ուսումնական նյութը հարմարեցնելով խառը տարիքային և լեզվի իմացության տարբեր մակարդակի գիտելիքներով աշակերտներին: Բնականաբար, հնարավոր չէ ստեղծել այնպիսի կատարյալ ձեռնարկ, որը հասցեագրված լինի միաժամանակ տարբեր տարիքի աշակերտներին: Այդ իսկ պատճառով ուսուցիչները ստիպված են միևնույն դասաժամին խումբը բաժանել ենթախմբերի և յուրաքանչյուրի հետ աշխատել տարբեր մեթոդներով և ձեռնարկներով՝ ուսուցման արդյունավետություն ապահովելու համար: Ահա այդպիսի աշխատանքի արդյունքում էլ ծնվում են ուսուցման նոր մեթոդներ, ստեղծվում նոր ուսումնական ձեռնարկներ, հրավիրվում են քննարկումներ, անցկացվում վարպետաց դասեր, իրականացվում մանկավարժական փորձի փոխանակում: Այս ամենի նպատակն է ամրապնդել հայոց լեզվի ուսուցումը ռուսախոս միջավայրում և նվազեցնել ուժացման վտանգները:

ԱՐԵՎ ԲԱՆԱՅԱՆ
Կրասնոդարի երկրամասի
Նովոռոսիյսկ քաղաքի
«Լույս» ՀՀ և Ռաևակայա գյուղականի
հայոց լեզվի ուսուցչուհի

ՄԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտ)

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽ ՆԱՄՇԵՆԱՆՅԵՐԻՑ ԳՐԱՌՎԱԾ ՄԻ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

1984 թ. Ղրղզստանի Օշի (այժմ՝ Բատկենի) մարզի Էսկի-Նաուկատ քաղաքում՝ Սուլեյման Քարախերահիմովի տանը, լսեցի «Ասա՛, բիձի՛գ, ասա՛» երգի ծայնագրությունը։ Այն սազի նվագակցությամբ երգում էին թուրքալի Արդվինի նահանգի խոփայի գավառի Չավուշլու գյուղում բնակվող նրա ազգականները։ Սուլեյմանը 1978 թ. այցի էր գնացել նրանց և ծայնագրել մի քանի խաղիկներ, նաև այս երգը։

*Ցունէ էյէվ, փըրնէց չամին դալինէ,
էրօնդ ախչիք դէսա լէրնան քալինէ,
Ալի քաուն կուքա, թորխ ընօղ չէ՛ս թա,
Փէրզը ախթ արնօղ ու գօր քալօղ չէ՛ս թա:
Ինձի ալ քօլէցէր, թուն ալ աէցար,
Տօմէին օղնինէ լալօվ նէն օնցար:
Ասա՛, բիձի՛գ, ասա՛, քօ դարդէթ շաղ ա,
Բազի բիր քալէս գու արդն ի վէր փաղա՛:*

Հետագայում թուրքալիում ինձ հաջողվեց կրոնափոխ համալսարաններից գրառել այս երգի ևս մի քանի տարբերակ՝

Անդրադառնա՞նք երգի որոշ բառերի.

ա) «Դալ», «տալ» մի շարք բարբառներով (Թբիլիսի, Ծալկա, Համշեն, Ղարաբաղ, Կարին, Արաբկիր, Պոլիս, Պարտիզակ և այլն) նշանակում է «ծառի ճյուղ»³: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ և Գևորգ Ջահուկյանի⁵ «դալ»-ը ծագել է հնդեվրոպական «dhal» (ծաղկել, կանաչել) արմատից։ Մեր դաշտային ուսումնասիրությունները վկայում են, որ քրիստոնյա համալսարանները «դալ» կամ «տալ» չեն ասում։ Նրանք ճյուղին ասում են «ջուխք», «ջուխկ» (սեռ.՝ ջխքօն, ջխկօն)⁶:

բ) «Էրօնդ», «Էրանդ» խոփայի խոսվածքով նշանակում է սիրուն, գեղեցիկ։ Դեռևս 1876 թ. Քարեգին վրդ. Սրվանձտյանցն իր կազմած բառարանում նշում է. «ռինդ», «ռընտիկ»՝ «կոկիկ, սիրուն։ Եվս՝ առողջ»⁷: Քրիստոնյա համալսարանները, Տրապիզոնի խոսվածքով «սիրուն», «գեղեցիկ» իմաստով ասում են «ըռնոնդ», «ըռնոնդիգ», Ճանիկի (Ջենիգի) խոսվածքով՝ «քասուն», «քէսուն», «քասուգ», «քասուլիգ»։ Ինչպես վկայում է Բաբկեն վրդ. Կյուլեսերյանը, նախկինում Ճանիկի (Ջենիգի) խոսվածքով էլ են ասել «ռոնտ», «ռինտ», որը նշանակել է «հանգիստ, աղէկ, լաւ»⁸: Բնիկ խոտորջուրցի Թորգոմ Գևորգյանի խոտորջուրի բարբառի անտիպ բառարանում «ըռնոնդ»-ի դիմաց գրված է «գեղեցիկ»⁹: Թեև բառը «Էրօնդ», «Էրանդ» տարբերակով չկա «Հայոց լեզվի բարբառային բառարանում», բայց նշված է, որ Արաբկիրի, Բալուխ, Գամիրքի, Եվդոկիայի, Ջեթունի, խոտորջուրի, Կարինի, Հաճնի, Մարաշի, Մուշի, Նիկոմեդիայի, Պոլսի, Սեբաստիայի, Վանի և այլ¹⁰ բարբառներում կիրառում են այլ տարբերակներ՝ ըռնոնտ, ըռնոնտիկ, ըռնոնտուկ, ըռնոնտ, ըռնոնդ, ըռնոնտ, ռինտ, ռինտիկ, ըռնդ, ռունդ, ըռնդիգ, ըռնտիկ, ըռնդիկ, ռունտիկ¹¹ և այլն։

Հ. Աճառյանը «Հայերեն գաղափարական բառարանում» գրում է, որ մի շարք բարբառներով (Ալալնթեգ, Եվդոկիա, Ջեթուն, Համշեն, Մարաշ, Նիկոմեդիա, Պոլիս, Ռումանահայք և այլն) «ռինտ» նշանակում է «լավ, գեղեցիկ, առողջ»¹²: Նույն իմաստն ունեն նաև «ռոնտ», «ռունտ», «ռնտիկ» բառերը։ Ըստ նրա, «ռինտ»-ը

ծագել է պարսկերեն «rind»՝ գեղեցիկ, «rindi»՝ գեղեցկություն, քրդերեն «rind», «rend»՝ սիրուն, գեղեցիկ բառերից¹³:

գ) «Լէրնան քալինէ» նշանակում է «յայլայից գալիս»։ Խոփայի խոսվածքով «յայլային» ասում են «լէր»։ Կրոնափոխ համալսարաններից բացի, միայն պատմական Համշենի հարավային հարևան Խո-

փոխության, վերածվելով «գ»-ի, ինչը հատուկ է խոսվածքին։

«Փէրկ» բառը չկա Սահակ վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան»¹⁶ բարբառային բառարանում, Հ. Աճառյանի «Հայերեն գաղափարական բառարանում» և «Քննություն Համշենի բարբառի» գրքում։ Այն չկա նաև «Հայոց լեզվի բարբառային

քաղաքի մոտակա Կյուշանա գյուղում) այսպես է նկարագրում այդ գործիքը. «Փետատը մեկ կամ երկու սայրանի երկաթ գործիք է, մի կողմում կամ երկու սայրերի մեջտեղում կոթառով, որի մեջ հազցնում են փայտի կոթը։ Ըստ կատարվելիք աշխատանքի, փետատները լինում են զանազան ձևի ու մեծության»²¹: Այնուհետև նա անդրադառնում է փետառների տեսակներին։

Ինչպես Համշենի բարբառի մի շարք բառեր, «փէրադ»-ն էլ ունի գրաբարյան ծագում։ «Նոր բառիկը հայկազեան լեզուի» աշխատասիրության մեջ կարդում ենք. «Փայտատ... որ և փայտահատ։ Տապար, կացին, փէտատ, պալթա, տէպէր»²²: Բացի կացին իմաստից, գրաբարում «փայտատ» ուներ նաև այլ իմաստ. «Երկաթ բրիչ, որ միանգամայն հատան է և փորէ գիող, փէտատ, գագմա»²³: Կրկին նշենք, որ «գագմա»-ն թուրքերեն «քագմա»-ն է, որը նշանակում է քլունգ։ Որպես փայտատ բառի հնագույն կիրառման նմուշներ նշվում են V դարի պատմիչ Ագաթանգեղոսի երկից օրինակներ. «Առեալ թագաւորին բահ և փայտատ՝ հատանել գոյիրս հանգստարանաց սրցն։ Վաստակել եգամբք, և բրել ձեռամբ՝ փայտատօք և բահիւք»²⁴: Բառանունը հանդիպում է նաև Ներսես Շնորհալու (XII դ.), Ներսես Լամբրոնացու (XII դ.) երկերում²⁵ և այլն։

Այսքան տարածված աշխատանքային գործիքի մասին «Հայոց լեզվի բարբառային բառարանում» ընդամենը գրված է, որ Մուշի, Վանի բարբառներով՝ «փետատ», իսկ Սասունի բարբառով՝ «փիտատ» նշանակում է քլունգ²⁶, սակայն չեն հիշատակված մյուս բարբառները, այդ թվում՝ Համշենի բարբառը, այն դեպքում, երբ այդ գործիքն ու նրա անվանումը այսօր էլ շատ գործածական են Արևազիայի և Կրասնոդարի երկրամասի բազմաազգար համալսարանության կենցաղում։

Լեզվաբան Անահիտ Աբրահամյանը «Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում» աշխատության մեջ բավականին մանրամասն անդրադառնում է «փայտատ» բառանվանը, տարբեր դարերում գրավոր աղբյուրներում նրա հիշատակություններին²⁷: Նա «Հայերենի բարբառագիտական ատլասի» ծրագրով հավաքված շուրջ 460 միավոր նյութերի ուսումնասիրությամբ պարզել է, որ բառանունը, տարբեր հնչյունական տարբերակներով, գրանցվել է 107 խոսվածքներում ու ենթախոսվածքներում, այդ թվում՝ Համշենի բարբառի խոսվածքներում²⁸: Այս ամենը նշանակում է, որ «փայտատը» (խոփայի խոսվածքով՝ «փէրկ») լայնորեն տարածված է եղել Հայաստանում։

ե) «Թօրխ էնուշ», «թօրխուշ» նշանակում է «փէրկ»-ով («փէրադ»-ով) հողակոշտերը մանրացնել, հողը փխրեցնել, սերմը հողով ծածկել, մարգ սարքել, մի խոսքով՝ հող մշակել։ Քրիստոնյա համալսարաններում ասում են ոչ թե «թօրխուշ», այլ՝ «թօխրուշ»։ Այդպես են ասել նաև XIX դ. վերջին։ Բ. վրդ. Կյուլեսերյանը 1899 թ. գրել է. «Այն տեղեր, ուր կարելի չէ հերկ ընել (եզով, խոփով) հունտը կը ցանեն եւ փէտատով կը փորեն ու կը տափեն միանգամայն, այս գործողութիւնը կ'ըսուի թէխրուշ = թօխրուշ»²⁹:

Հ. Աճառյանը «Հայերեն գաղափարական



տորջրի հայերն էին յայլային «լէռ» ասում. «Լեռ 1. սար։ 2. ամառանոց, ուր անասունները մէկ երկու ամիս կը կենան»³⁴: Հետաքրքիր է, որ նույնիսկ քրիստոնյա համալսարանները յայլային «լէր» չեն ասում, այլ՝ «այլա»։

Կրոնափոխ համալսարանները Արդվինի նահանգում ունեն նշանավոր յայլաներ՝ «Բիլբիլան լէր» (Պալլան, Փայլիլուն յայլա), «Մէժ լէր» (Մեժ յայլա) և այլն։ Ռիգեի նահանգի թուրքալիս համալսարանները ևս ունեն «լէր» բաղադրիչով յայլաների անուններ, օրինակ՝ Չայելիի գավառում կան «Էդի լէր» (Վերջին յայլա) և «Վեյի լէր» (Վերին յայլա) անուններով սարատեղիներ։

դ) Նպատակահարմար ենք գտնում սկզբում անդրադառնալ «փէրզը» բառին, որպեսզի ավելի դյուրին լինի «թօրխ» բառի բացատրությունը։ Դարեր ի վեր համալսարանների հետ հարևանությամբ ապրած լազերը՝ ճաները (ջան, ջօն) ունեն «bergi»³⁶ (բերգի) կոչվող աշխատանքային գործիք, որով արտ են փորում, գյուղատնտեսական աշխատանքներ կատարում։ Խոփայի խոսվածքին հատուկ բ>փ և գ>կ(ք) հնչյունափոխությունները հաշվի առնելով, կարելի է ենթադրել, որ «բերգի»-ն խոփայի խոսվածքում դարձել է «փէրկ», «փէրք», բառավերջի «ի»-ն սղվել է, «կ», «ք» բաղաձայնները ծայնավորից՝ «ը» հոդից առաջ ենթարկվել են դիրքային հնչյունա-

բառարանի» բազմաաղատորակում։ «Փէրկ»-ը նման է թեք կամ ուղիղ, լայն լեզվակով (շեղբով) երկարապոչ ուրագի։ Երբեմն մետաղյա գլխիկին կոթի ուղղությամբ, ունենում է փոքր սայր։ Փերկերը, ըստ օգտագործման նպատակների, ունենում են որոշ տարբերություններ։ Նույնատիպ գործիքին քրիստոնյա համալսարաններում ասում են «փէրադ»։ Բ. վրդ. Կյուլեսերյանը 1900 թ. գրում է. «Փէրտատ-բրիչ, թրք. դագմա»³⁷: «Դագմա»-ն թուրքերեն «Kazma» (քագմա) բառն է, որ նշանակում է քլունգ, բրիչ։ Ս. վրդ. Ամատունին նշում է, որ Ալաշկերտի, Մուշի, Վանի բարբառներում «փէրտատ» նշանակում է «մուրձ, քլունգ» և գրավոր աղբյուրներից բերում է երկու օրինակ, որոնք հաստատում են «փէրտատ»-ի միայն բրիչ լինելը³⁸: Անշուշտ, այն «մուրձ» անվանելը սխալ է։ Ըստ Հ. Աճառյանի՝ Բուրանիայի, Ջեթունի, Մուշի, Տրապիզոնի բարբառներով «փայտատ» նշանակում է «կացին, տապար», իսկ Ախալցխայի, Եվդոկիայի, Խաթաբի, Խարբերդի, Խիանի, Համշենի, Մարաշի, Վանի, Դերսիմի, Քղիի բարբառներով՝ «բրիչ (հողը փորելու համար)»³⁹: «Քննություն Համշենի բարբառի» գրքի բառարանում, նա առանց նկարագրելու կամ որևէ բացատրության, գրում է. «փայտատ-փէրադ, սեռ. փէրտադի»⁴⁰:

Համշենի ազգագրագետ Բարունակ Թոռլաքյանը (ծնվ.՝ 1899թ. Տրապիզոն

բառարանում» գրում է, որ Ղարաբաղում «թոխը» են ասում հող փորելու, պատ քանդելու սուր, երկաթե ծայրով և կարճ, փայտյա կոթով բրիչին: Ավելի հասկանալի լինելու համար բերում է թուրքերեն անվանումը՝ «խազմա»³⁰: Ինչպես նշել ենք «խազմա»՝ քազման, քլունգն է և «կարճ փայտյա կոթով բրիչը» քլունգն է և ոչ թե «փեղաղը» (փեղկը), որի կոթը երկար է և ունի երկարապոչ ուրագի տեսք: Հ. Աճառյանը շարունակում է բացատրել, որ «թոխը» Ղարաբաղում նշանակում է «բրիչով փորել»³¹, ինչը պետք է հասկանալ քլունգով փորել: Նա գրում է, որ Համշենի բարբառով թոխը նշանակում է «հողը բրիչով փշրել, մանրել», այնուհետև, աղբյուրը նշելով, ամբողջովին ներկայացնում է Բ. վրդ. Կյուլեսերյանի նկարագրությունը³²:

Տարիներ անց Հ. Աճառյանը հայերենի վրա վրացերենի ազդեցության մասին գրելով, նշում է. «Սակայն նույն իսկ Կրաստանից դուրս, բուն Հայաստանի հեռու գավառների ժողովուրդը ունի մի խումբ բառեր, որ վրացերենից փոխ առնելով մտցրել է իր բարբառի մեջ, որից էլ մի մասը անցել է մեր այսօրվա գրական լեզվին»³³: Նա թվարկում է 11 բառ, այդ թվում՝ «թոխը». Ղրբ. «բրիչ», թոխը Ղրբ. «բրիչով փորել», Հմշ. «հողը բրիչով փշրել, մանրել» < վրաց. թոխը «փորել»³⁴:

Լազերենում (ձաներենում) ևս այս գործիքն ունի անվանման երկու տարբերակ՝ «torxi»³⁵ (թորխի) ու «toxi» (թոխի) և նշանակում է «բառ» (չափա՝ բրիչ), «bergi» (բերգի՝ փեղկ): Թուրքիայի Ռիզեի նահանգում՝ Աթինայում (Փազարի բարբառ) լազերն ասում են «toxi» (թոխի), իսկ Կիծեում (Ֆրնդըքլի բարբառ)՝ «torxi» (թորխի). մեզրելները նույնպես ասում են «torxi» (թորխի)³⁶:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» «թոխը», «թոխի» գործիքը բացատրված է «Քաղհանի ուրագ»³⁷: «Թոխը» բայը ներկայացված է որպես նորաբանություն և բացատրված է. «1. Քաղհանի ուրագով բանջարեղենի հողը փխրեցնել: 2. (ժող.) Առհասարակ բրել: 3. փխր. (ժող.) Բանսարկել, կռվեցնել: 4. (ժող.) Վայրիվերո խոսել, ճռռոմբանել»³⁸: Իսկ «թորխել» «նորաբանությունը» «քաղհանի ուրագով հողը փխրեցնել» իմաստով ընդգրկվել է նաև դասագրքում. «Այգին մայիս ամսին ավելի խորը կարելի է թորխել»³⁹:

զ) «Գոր» խոփայի խոսվածքով նշանակում է համապատասխան փոխօգնություն, համատեղ, անվճար աշխատանք, որի ընթացքում նաև երգում են, ժողովրդական բանավոր ստեղծագործություններ ասում: Խոսվածքին հատուկ կ>զ և ռ>ր հնչյունափոխություններից դատելով, դժվար չէ կռահել, որ այն հիշեցնում է հանրահայտ «կոռ» հարկատեսակը, որի ժամանակ գյուղացիները պարտավոր էին հողատիրոջ համար, որոշակի օրերի, իրենց աշխատանքային գործիքներով անվճար աշխատել: Բառը շատ տարածված է խոսվածքում, և երբ կրոնափոխ համշենահայերի Ստամբուլի «Հաղիզ» (Հատիկ) մշակութային միության անդամներից մի քանի մտավորականներ 2014 թ. սկսեցին լատինատառ կիսամյա հանդես հրատարակել, որում տպագրվում էին նաև խոփայի խոսվածքով նյութեր և բանահյուսություն, այն կոչեցին «Gor» (Գոր), որպես համատեղ, անվճար աշխատանքի արդյունք:

«Կոռ» հարկատեսակը մանրամասն վերլուծել է Հակոբ Մանանդյանը⁴⁰: Ըստ նրա՝ «կոռ»-ը հիշատակվում է դեռևս Դվինի 645 թ. ժողովի ԺԼ կանոնում, Մխիթար Գոշի (XII-XIII դդ.) «Դատաստանագրքում», տարբեր ձեռագիր մատ-

յաններում, Մրենի (992 թ.), Անիի (1059-1064 թթ.), Հառիճի (1201 թ.), Դսեղի (1237 թ., 1241 թ.), Սբ. Սիոնի (1283 թ.), Չագավանքի (1325 թ.) և այլ վիճագիր արձանագրություններում⁴¹:

Նիկողայոս Ադոնցը կարծում է, որ «կոռ»-ը ծագում է իրանական «Kar» (քար- Ս. Վ.)՝ «աշխատանք» բառից⁴²: Հ. Աճառյանն անդրադառնալով տարբեր գիտնականների ստուգաբանություններին, այն համարում է «դեռ չմեկնուած բառ»⁴³: Գ. Ջահուկյանը ևս այն չի ստուգաբանում⁴⁴:



Չավուշլու գյուղում (լուսանկարները՝ Ս. Վարդանյանի, 2013թ.)

Հետաքրքրական է, որ կրոնափոխ համշենցիներից բացի «կոռ» բառն օգտագործվել է նաև այլ բարբառներում, օրինակ՝ Խոտորջրի բարբառում «կոռուոր» նշանակել է «ծրի բանող»⁴⁵: Թ. Գևորգյանն իր անտիպ բառարանում այսպես է բացատրել խոտորջրիների «կոռվոր» բառը՝ «խմբովին ծրի աշխատանք կատարողները հարևանի համար»⁴⁶: Երևանում և Ղարաբաղում «մորեխակոռ» են անվանել «մորեխները ոչնչացնելու ծրի պարտադիր աշխատանք»-ը, իսկ «կոռուոր»՝ «կոռի վրայ աշխատող»⁴⁷-ին: Բայց քրիստոնյա համշենահայերը համատեղ, անվճար աշխատանքին «գոր», «կոռ» չեն ասում, այլ՝ «էրդատ»⁴⁸, «էրդաթ»⁴⁹: Բ. վրդ. Կյուլեսերյանը 1899 թ. հրատարակված իր բառացանկում «էրդատ»-ը չի բացատրել, այլ պարզապես բառի դիմաց գրել է «Մէճի», քանի որ այն տարիներին «Բիրակն»-ի ընթերցողները հասկանում էին ինչ է «Մէճի»-ն⁵⁰: Կարծում ենք՝ այն թուրքերեն «imece» (իմեջե) բառն է, որ նշանակում է օգնություն, օժանդակություն, համատեղ ուժերով կատարվող գյուղատնտեսական աշխատանքներ⁵¹: Համշենահայերի ազգագրության լավագույն գիտնականներից մեկը՝ Հակոբ Մուրադյանը նույն՝ 1899 թ. հրատարակված իր ուսումնասիրության մեջ «էրդաթ»-ի մասին գրում է. «Ինչպես որ առանձին անհատներ իրար օգնում են, այնպես էլ երբեմն, հարկ եղած դեպքում, համայնքը կամ նրա անդամներից շատերը խմբով ու միացած օգնութեան

են գալիս իրանցից մէկին: Այդ բանը լատարայայտում է «էրդաթ» կոչուած աշխատանքի ժամանակ: «էրդաթ» է կոչուում այն աշխատանքը, որ կատարում է հաւաքական կերպով, համայնքի անդամներից մէկի խնդրանքով, նրա նեղ ժամանակ և նրա օգտին, դա է «էրդաթ բօնել» կամ «էրդաթ բօնեցնել»⁵²: Այնուհետև նա նկարագրում է «էրդաթի» տարբերակները, որոնք, հավանաբար, նույնն են եղել նաև մահմեդական համշենահայերի մոտ և, ինչպես նշեցինք, կոչվել են «գոր»: Անդրադառնանք «էրդաթ»,

որ և Համշենի բարբառի «էօղ» (սեռակաւնը՝ օղօն) բառը, որը նշանակում է «երկարանիստ բլրակ»⁵³: Հ. Աճառյանը «էօղ», «օղօն» բառերին հետագայում անդրադառնում է «Քննություն Համշենի բարբառի» գրքում, գրելով. «Համշենի բարբառը հարուստ է գրաբարի այնպիսի հազվագյուտ բառերով, որ ոչ մի բարբառի մեջ կարելի չէ գտնել» և ի թիվս այլ օրինակների, նշում է «ողն»-էօղ, օղօն», «երկարանիստ բլրակ»⁵⁴: Գրքի բառարանում գրում է. «Ողն-էօղ, յէօղ, յօխ «երկարանիստ բլրակ», սեռ. օղօն, յգ. «օղնունկ»⁵⁵:

Այսօր «օղօն» բառը Արխագիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերից շատերն օգտագործում են «բարձունք» նշանակությամբ: Այն հանդիպում է նաև նրանց խաղիկներում.

Ինա վիրի օղօնը
Բուբու դարավ դօղօնը,
Բիջի դղա գարկօղին
Շակար լըլում պէրօնը:
(Շունը փընա՝ պէրօնը)⁵⁶:

Թարգմանություն

Այն վերի բարձունքը
Ճուտիկ տարավ բազեն,
Փոքր տղա ամուսնացնողի
Բերանը շաքար լցնեն:
(Բերանը շունն աղտոտի):

ը) «Բիծիզ» նշանակում է «փոքրիկ»: Քրիստոնյա համշենահայերն ասում են նաև «բիջիզ»:

թ) «Բազի բիր» թուրքերեն նշանակում է «երբեմն», «մերթ ընդ մերթ», «մեկ մեկ»: Մի շարք բարբառներում հաճախ նույն իմաստով ասում են «բազի-բազի»⁵⁷:

Ներկայացնում ենք 1984 թ. Ղրղզստանի Օշի մարզի Էսկի-Նաուկատ քաղաքում և 2013 թ. Թուրքիայի Արդվինի նահանգի Բորջայի գավառի Շիլքոյ գյուղում մեր գրառած «Ասա՛, բիծի՛զ, ասա՛» երգի թարգմանությունը.

Ձյունը եկավ, ծածկեց սոճու ճյուղը,
Սիրուն աղջիկ տեսա յայլայից գալիս,
Էլի գարուն կգա, թորիս չե՛ս անելու,
Բրիչը ձեռքդ առնելու ու կռօի չե՛ս
գնալու:

Ինձ էլ վառեցիր, դու էլ այրվեցիր,
Մզկիթի բլուրով լալով այն կողմ անցար:
Ասա՛, փոքրիկ, ասա՛, քո դարը շատ է,
Երբեմն գնում ես արտն ի վեր՝ փայտի:

Թեև հողվածի ծավալի պատճառով, երգի բոլոր բառերին չանդրադարձանք, բայց եղածն էլ փաստում է, որ մեր գրառած ութ տողանոց երգում արտացոլված են խոփայի խոսվածքի յուրահատկությունները, բնիկ հայերեն և փոխառյալ բառերը, խոսվածքի և այլ բարբառների ընդհանրություններն ու տարբերությունները:

1. Ս. Վարդանյան, Համշենի մուսուլման հայերը.- Փյունիկ, պարբերաթերթ, Ե., 1991, հունվարի 25 (N 1): Նույնի, Համշենի մուսուլման հայերը.- Իրան-Նամե, ամսագիր, Ե., 1993, N 4, էջ 13: Նույնի, Մեկ երգի հինգ տարբերակ.- Չայն համշենական, ամսաթերթ, Ե., 2008, N 7-8: Նույնի, Կրոնավորիս համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Ե., 2009, էջ 205-210: Նույնի, Կորած հայերի հետքերով ձանապարհորդություն Միջին Ասիա. 1984.- Չայն համշենական, 2016, N 3-4:
(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ПЕДАГОГ ЭТО-ПРИЗВАНИЕ ДУШИ!

Мы часто недооцениваем роль учителя в нашей жизни.

Это потому, что имея в виду одно значение слова «учитель» – передающий знания, мы порою неосознанно упускаем второе его значение – «наставник», то есть наставляющий молодое поколение, как жить. А это значение определяет гражданское назначение учителя, его человеческое предназначение в этом мире.

В полной мере этому соответствует и герой нашего повествования, замечательный учитель – Ашот Арменакович Давтян проработавший более 42 лет в системе образования – человек широкой души, умеющий видеть и слышать сердцем, умеющий понять ученика, помочь ему разобраться в своих желаниях и устремлениях, найти свой путь в жизни.

достоинство. Главное иметь призвание к этой профессии. Это одна из самых значимых и благородных профессий.



- Ашот Арменакович, как Вы начали свою трудовую деятельность в роли учителя?

- Вообще я думаю, что у нас это семейное. Мой дед, Давтян Овсеп Ованесович живя в Турции, преподавал в г. Орду. Моя дочь Роза Давтян уже многие годы преподает русский язык и литературу. Родился я в 1925г. в Цебельде село Большой Краевич Абхазской АССР. Закончил Цебельдинскую среднюю школу. В 1945г. поступил в Сухумское педагогическое училище. Работал преподавателем истории Цебельдинской средней школы. Потом перевели директором верхнее Гулирипшской восьмилетней школы. Ныне Цамбекуарская средняя школа.

- В школе ребенок, прежде всего, приобретает опыт социальной жизни, и первооче-

редная задача учителя – воспитание личности. Какая точка зрения у Вас по этому поводу?

- Многое закладывается с детства. Формируется характер, выбираются друзья, складываются взаимоотношения с разными людьми, вырабатываются нормы поведения. Воспитание детей – самая важная область нашей жизни. Несомненно, в школе дети приобретают жизненные опыт и знания. Воспитание – это обеспечение широкого взаимодействия ребенка с многообразиями явлений жизни, в процессе которого у него формируется отношение к окружающему миру на уровне человеческой культуры. Прежде всего, воспитание в школах должно быть ориентировано на повышение патриотического, духовного, нравственного и культурного уровня учащихся.

- Что можете вспомнить о первых армянских очагах просвещения на территории Абхазии?

- Первые очаги просвещения на территории Абхазии были открыты в сельских районах, при церквях приходскими школами и даже в частных домах. В 1908г. была открыта Багажштская, вначале восьмилетняя потом средняя школа

В Цебельде была открыта духовная школа. Хочется

вспомнить и отметить таких педагогов как Ашкен Туманян, которая работала в Багажштской средней школе это жена Микояна Анастаса Ивановича. Наши ученики после окончания школы поступали в ведущие ВУЗы России. Мирзоян Анна учитель начальных классов, стала заслуженной учительницей Абхазской АССР. Миносян Пауль Аковна с двумя высшими образованиями старший учитель Абхазской АССР.

- Какими качествами нужно обладать, чтобы заниматься таким важным ремеслом?

- Человек в первую очередь должен быть профессионалом своего дела, ему должно нравиться, то чем он занимается. Он должен обладать глубокими знаниями сам, абсолютно не на поверхностном уровне.

И самое главное он должен обладать умением передавать эти знания.

И особо важный момент – огромная любовь к детям. К каждому ребенку надо относиться, как к своему родному. К каждому нужен индивидуальный подход.

- Ашот Арменакович, расскажите, о судьбе вашей семьи как она переселилась на прекрасную абхазскую землю?

- Армяне после событий в Западной Армении нашли приют на гостеприимной абхазской земле, особенно в

период их массового истребления в Турции в 1895-1896гг. Эти события и затронули мою семью. Моя семья переехала из окрестностей Орду, Западная Армения (ныне Турция). Обосновалась моя семья в высокогорном селе Цебельда. Как и многие другие переселенцы стали арендовать землю и расширять хозяйство.

- В былые времена армяне всегда отличались способностью сохранять высокий уровень своей генетической однородности. Ныне в реалиях сегодняшнего дня, даже при наличии общинной структуры, осознанная национальная обособленность все более становится слабой. Что Вы думаете по этому поводу?

- Нужно учить родной язык. В какой бы стране мы не жили. Это самый главный момент, живя в условиях диаспоры. Нас радует, что сегодня в Абхазии функционируют армянские школы. Армянской общине необходимо развивается в этом направлении, повышая уровень качества преподавания в школах. Повышать роль и значение армянского языка. Проводить литературные вечера на родном языке, круглые столы. Постараться передать молодому поколению наши духовные ценности, которые сохранили и донесли до нас наши предки.

ЭЛЕОНОРА УЗУНЯН
Абхазия

(Սկիզբը՝ 4-5-րդ էջերում)

2. Ս. Վարդանյան, Մեկ երգի հինգ տարբերակ.- Չայն համալսարան, Ե., 2008, N 7-8: Նույնի, Գյոքհան Բիրբենի հայերեն երգերը.- Չայն համալսարան, 2008, N 11-12: Նույնի, Կրոնափոխ համալսարանի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), էջ 211-215: Նույնի, Բանահյուսական նշխարներ.- Չայն համալսարան, Ե., 2014, N 7-8: Նույնի, Նոր գրառումներ Արդվինի նահանգի Օսմանիյե գյուղում.- Չայն համալսարան, 2016, N 7-8:
3. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 298:
4. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 612, 613:
5. Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 180:
6. Հ. Աճառյան, Քննություն Համալսարանի բարբառի, Ե., 1947, էջ 243:
7. Գ. Սրվանձույան, Երկեր, հ. 1, Ե., 1978, էջ 347:
8. Բ. Վրդ. Կիլիսեթեան, Ճանիկի վիճակին մէջ գտնուող համալսարանը՝ Բիրակն, Կ. Պոլիս, 1900, N 4, էջ 61:
9. Թորգոմ Գալուստի Գևորգյան (ծնվ.՝ 1898 թ., Խոտորջուր), Խոտորջուրի ազգագրական նյութեր, Խոտորջուրի բառերի բառարան, 1969 թ., էջ 17, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Ազգագրության բաժին, N 283:
10. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Ե., 2002, էջ 50, 51, հ. Ե, Ե., 2008, էջ 235, 236:
11. Նույն տեղում:
12. Հ. Աճառյան, Հայերեն գալառական

- բառարան.- Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 948:
13. Նույն տեղում:
14. Հ. Յ. Վ. Հուլունեան եւ Հ. Մ. Վ. Հաճեան, Յուշամատեան Խոտորջուրի, Վիեննա, 1964, էջ 457:
15. Büyük Lazca Sözlük, Didi Lazuri Nenapuna, Lazca-Türkçe/Türkçe-Lazca, Istanbul, 2007, s. 62.
16. Հայոց բառ ու բան, աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912:
17. Բ. Վրդ. Կիլիսեթեան, նշվ. հոդվածը.- Բիրակն, 1900, N 6, էջ 83:
18. Ս. Վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 650:
19. Հ. Աճառյան, Հայերեն գալառական բառարան, էջ 1063:
20. Հ. Աճառյան, Քննություն Համալսարանի բարբառի, էջ 256:
21. Բ. Թորգոմյան, Համալսարանի ազգագրությունը, Ե., 1981, էջ 119:
22. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 931:
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում:
25. Նույն տեղում:
26. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Զ, Ե., 2010, էջ 368:
27. Ա. Աբրահամյան, Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, Ե., 2013, էջ 40-48:
28. Նույն տեղում:
29. Բ. Վրդ. Կիլիսեթեան, նշվ. հոդվածը.- Բիրակն, Կ. Պոլիս, 1899, N 38-39, էջ 605:
30. Հ. Աճառյան, Հայերեն գալառական բառարան, էջ 372:
31. Նույն տեղում:
32. Նույն տեղում:

33. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Ե., 1951, էջ 224:
34. Նույն տեղում:
35. Büyük Lazca Sözlük, Didi Lazuri Nenapuna, Lazca-Türkçe/Türkçe-Lazca, Istanbul, 2007, s. 907.
36. Նույն տեղում:
37. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1972, էջ 221, 228:
38. Նույն տեղում, էջ 221:
39. Նույն տեղում, էջ 228:
40. Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ, Ե., 1981, էջ 107-115:
41. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 107, 108:
42. Ն. Արոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 539:
43. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 638:
44. Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 420:
45. Հ. Յ. Վ. Հուլունեան եւ Հ. Մ. Վ. Հաճեան, Յուշամատեան Խոտորջուրի, էջ 472:
46. Թ. Գևորգյան, Խոտորջուրի ազգագրական նյութեր, Խոտորջուրի բառերի բառարան, 1969 թ., էջ 37, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Ազգագրության բաժին, N 283:
47. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 638:
48. Բ. Վրդ. Կիլիսեթեան, նշվ. հոդվածը.- Բիրակն, 1899, N 38-39, էջ 604:
49. Յ. Մուրադեանց, Համալսարանի հայեր (ազգագրական նյութեր).- Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1899, N 1, էջ 384, 385:
50. Բ. Վրդ. Կիլիսեթեան, նշվ. հոդվածը.-

- Բիրակն, 1899, N 38-39, էջ 604:
51. Բ. Եսուպով, Турецко-русский словарь, Москва, 2005, с. 273.
52. Յ. Մուրադեանց, Համալսարանի հայեր (ազգագրական նյութեր), էջ 384, 385:
53. Բ. Եսուպով, Турецко-русский словарь, с. 257.
54. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Ե., 2002, էջ 190, 191:
55. Հ. Սկրտչյան, Կարնո բարբառը, Ե., 1952, էջ 145:
56. Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Ե., 2009, էջ 315:
57. Հ. Աճառյան, Հայերեն գալառական բառարան, էջ 1135:
58. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 554:
59. Հ. Աճառյան, Քննություն Համալսարանի բարբառի, էջ 12:
60. Նույն տեղում, էջ 248:
61. Ի դեպ, այս խաղիկում օգտագործված է բնիկ հայերեն, գրաբարյան ծագման բառ՝ «փին», որը գրաբարում նշանակել է «աղբ, կոկորանք», շան աղբ, շան կոկորանք՝ «շանփին», տես Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 504, 505:
62. Ասացող՝ Լիդա (Զինափոխ) Ավետիսյան, ծնվ. 1940 թ. Արխագիայի Գուդարայի շրջանի Անուխվա գյուղում, բնակվում է Երևանում:
63. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 145: Բ. Եսուպով, Турецко-русский словарь, с. 62.

Հոդվածը փոքր կրճատումներով տպագրվել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Գիտական հոդվածների ժողովածուում», 2016թ., էջ 353-366:

СОЧИНСКОЕ СЕЛО БОГУШЕВКА ОТМЕТИЛО 120-ЛЕТНИЙ ЮБИЛЕЙ (1896-2016)

Бодрая музыка, начиная с полудня призывала всех на центральную площадь села Богушевка Хостинского района города Сочи. Жителей, сельчан приглашать было не нужно, они давно знали о предстоящем праздновании юбилея и готовились к нему. Первые ряды у площадки, где проходило чествование жителей и концерт, заняли старожилы. Потомки фамилий родов, обосновавшихся здесь, в Богушевке 120 лет назад. Они выглядели счастливыми в этот день. Название села для них-жизненный путь целых поколений. Основателем села считается Бали Бедросович Христякян. В далеком 1896 году, уйдя морем из Турции, он обосновался на этих землях, которые тогда принадлежали царскому наместнику Богушевскому. С той поры и началась история села. В 20-х годах прошлого века здесь организовали колхоз имени Шаумяна, затем — имени Кагановича, далее — «Победа». В 60-х годах земли отошли к опытно-производственному хозяйству «Хостинское». Но суть не в названиях и ведомственной принадлежности. Люди здесь всегда без устали работали. Из четырехсот жителей Богушевки половина — дети и молодежь. И мало кто отсюда уезжает. Место такое притягательное. Христякяны, Сауляны, Аракеяны, Калайджяны, Мавяны, Кагосяны — представители этих и других «династий» испокон века живут в селе.

Первым слово для поздравления было предоставлено первому заместителю Главы города Сочи Мугдину Мадиновичу Чермиту: «Наше знаменитое село Богушевка. Его первые поселенцы — Христякяны, Мавяны, Аракеяны, другие фамилии много сделали, чтобы здесь удобно было жить и взрослым и детям. Конечно, не дай Бог испытать всем такого, что выпало на долю этих людей. Вы живете не только в лучшем городе России, но и мира. Привлекательность множества сел доказывает это. Село многонациональное. Язык, традиции, обычаи сохраняются здесь благодаря тому, что люди знают друг друга и с удовольствием постоянно общаются. Должен сказать, что в селах Сочи традиции и обычаи предков сохраняются значительно лучше, чем в городе. Я желаю вам,



чтобы и через последующие 100 и через 200 лет это доброжелательное общение, этот настрой жителей не пропадал».

Именно к ним, к жителям села, было обращено в первую очередь приветствие и поздравление Председателя Союза армян России города

Сочи Гамаяка Нерсесовича Устьяна: «120 лет срок для истории не такой уж большой, но и не малый. Произошло за это время становление Богушевки, вас самих, поскольку вы потомки тех, кто здесь основывал и развивал все, чем славится теперь село. Непростыми были для них эти годы. Здесь беженцы расчищали настоящие «джунгли», создавали поля, плантации, сеяли, пахали, собирали урожай. Руками ваших предков создавалось это село и то, как оно будет жить дальше, зависит тоже от вас. Вы здесь многие родились, росли, создавали семьи, воспитывали детей. В начале Великой Отечественной войны десятки людей ушли отсюда, из села, на фронт, защищать Родину и вас. А впоследствии те, кто вернулись, посвятили себя тому, чтобы восстановить все разрушенное, в том числе и родное село. Теперь можно оценить результаты всего, что создавалось поколениями-ваше село прекрасно выглядит, и оно достойно того, чтобы и дальше благополучно жилось здесь. Я от души вам этого желаю!»

Исторически сложилось так, что сначала в селе поселились армянские семьи, а позже в село облюбовали представители более 10 национальностей — русские, адыги, украинцы, грузины, молдаване, немцы и др. Здесь прижились традиции всех национальностей, проживающих в Краснодарском крае, их песни и танцы.

В программе праздника выступили не только талантливые дети и творческие коллективы из сельских округов Хостинского района, но и студенты Сочинского колледжа искусств, под дружные аплодисменты зрителей, участников и гостей сельского праздника, они исполнили несколько хореографических композиций — русский танец «Возле речки, возле моста», Буковинский танец, задорный танец «Подплясочка». А образцовый хореографический ансамбль «Урарту» из Барановского сельского клуба под руководством Георгия Шакаряна с воодушевлением преподнес свои «коронные» танцы «Арцах», «Кинто» и «Шалахо». Впечатляюще выглядел грузинский танец «Аджарули» в исполнении танцевального коллектива «Илори». Сельчан особо по-

радовали юные таланты из Богушевки. Арина Калайджян выбрала для праздничного концерта песню «Я люблю тебя Россия».

Степан Сетракович Кагосян, депутат Городского собрания Сочи родом из этого села, поэтому его выступление было не просто поздравлением. Он ответил на самые важные вопросы, не решенные до сих пор, касающиеся жизнеобеспечения и благоустройства своей «малой Родины» села Богушевка. Обнадежил жителей, что депутатская группа, постоянно помогающая справляться с самыми важными на сегодняшний день проблемами села, добьется, наконец, разрешения существующей многие годы проблемы с отсутствием водопровода. И близок тот день, когда в селе появится газ. «Я надеюсь, что нам вместе удастся добиться, чтобы село процветало и пользовалось всеми благами жизни. Чтобы здесь дружно и счастливо жили бок о бок старики и молодежь».

К поздравлениям Степана Кагосяна присоединился и депутат Городского собрания Оганес Чепнян: «Вы не только в праздники приглашайте нас. Вы должны знать, что в городе есть люди, к которым всегда можно обратиться и они помогут». Оганес Меликович обещал, что скоро в селе появится детская площадка и будут проведены другие работы по благоустройству. Молодежи в селе прибавилось, это было заметно. Праздник встречали с одними и теми же чувствами и старики, и молодежь. Несомненно, преемственность поколений здесь есть, она очевидна. Проявилось же наиболее ярко в самом начале праздника, когда юные жители села, взобравшись на памятный камень, установленный в день столетнего юбилея Богушевки хором декламировали стихи, по сценарию предваряющие празднование юбилея:

*«История села у нас
большая,
Она вот здесь, везде,
перед тобой,
История у Богушевки
непростая
И связана она с людской
судьбой».*

НАТЕЛЛА СААКОВА
САРСОЧИ, 15/11/2016

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ՀՀ ԳԱՄ հնագիտության և
ազգագրության ինստիտուտ)

ԹՈՂԱՐԿՎԵԼ Է ԱԼԹԱՆ ԶԻՎԵԼԵԲԻ ԽՏԱՄԿԱՎԱՌԱԿԸ

Համշենցի երգիչ, երգահան և բանաստեղծ Ալթան Զիվելեբը 2016 թ. Ստամբուլում թողարկեց իր առաջին խտասկավառակը, որը կոչվում է «Քարայել» (Սև քամի): «Քարայելը» Ալթանի ընկերուհու՝ տրապիզոնցի լրագրողուհի Յասեմին Աքթեյի գրական կեղծանունն է եղել: Յասեմինը 2009 թ. հունվարի 25-ին մի քանի ընկերների հետ մնացել է ձմաշուրի տակ և զոհվել Տրապիզոնից 120 կմ հարավ գտնվող նշանավոր Զիզանայի կիրճում, որը ձմռանը դժվարանցանքի է դառնում:

Ալթան Զիվելեբը նախկինում համացանցում մի քանի երգեր է տեղադրել, որոնցից «Մադմոնեդ մոնա, մոնա» երգը շատերն էին հավանել: Ցավոք, այս խտասկավառակում այն չկա:

Համշենի բարբառի խոսքի խոսվածքով կա մեկ այլ երգ՝ «Յէ՛ մոմի»: Խտասկավառակի 15 երգից 12-ը թուրքերեն է, 1-ը՝ վրացերեն, 1-ը՝ լազերեն, և, ինչպես նշեցինք, ընդամենը 1-ը՝ հայերեն: Երբ մեր գարնանը հայտնեցինք Ալթանին, նա ասաց, որ ապագայում մի օր կիրատարակի միայն Համշենի բարբառով երգերից կազմված խտասկավառակ: Դե ինչ, մնում է համբերատար սպասել:

Իսկ վրացերեն և լազերեն երգերի առկայությունը, կարծում ենք, պայմանավորված է նաև նրանով, որ Արդվինի նահանգի խոսքի գավառի Քեմալպաշայի (նախկին Մաքրիյալ) գյուղախմբի Քյուրուզու գյուղում, որտեղ 1976 թ. ծնվել է Ալթանը, համշենցիների հետ ապրում են նաև լազեր, որոնք կազմում են գյուղի բնակչության մեկ երրորդը: Նա մանուկ հասակում ընտանիքով տեղափոխվել է Ռիգեի նահանգի Արդեշեն քաղաք, որտեղ նույնպես լազեր են ապրում:

Նրա հայրը երաժիշտ էր, նվագում էր հարվածային գործիքներ (զոհվել է ավտոկործանման, հորեղբայրները նվագում են սազ, կիթար և այլն: Ալթանը 12 տարեկանից նրանց հետ երգել է հարսանիքներում:

1993 թվականից բնակվում է Անկարայում, բայց կապը հայրենի գյուղի հետ պահպանում է և ամեն տարի այցելում է հարազատներին:

ՄԱԴՄՈՆԷԴ ՄՕՆԱ, ՄՕՆԱ

Ուստեցի՞ էս, ուստեցի,
Յէս ջօնչէ չքարցի քէզի,
Միլլաթէս դուշման աղան,
Հազ այի դիյէ քէզի:

Կրկներգ.
Մադմոնեդ մոնա, մոնա,
Բիթուն քու մօէ փօն ա,
Թուն քօլեցէր ինձիգի,
Ասպած ա քէզի քօլա:

Վարթնուղ ում, էրթօղ ում,
Իսփօլօրաս փախջօղ ում,
Էդէթիաս փուր աս,
Արդեցուքէս վաթօղ ում:

Իմ դունէ Քաթափլային ա,
Գօխուլային էնթին ա,
Յէս քէզի շադ հազ այի,
Թուն ալ ինձի հազ աա:

Դէնօղուն վանիվա,
Լափա-լափա ցուն քուքա,
Քու դադին էրգէվաան
Ինձ ամա փօնջար քաղա:

Խոսքը՝ Ալթան Զիվելեբի,
երաժշտությունը՝ ժողովրդական

- Յուրաքանչյուր տող երգվում է երկուական անգամ:
- Կրկներգը կրկնվում է յուրաքանչյուր քառատողից հետո: Այն ժողովրդական հայտնի խաղիկ է, որը տարբեր երգիչներ օգտագործել են իրենց երգերում:



ԻԼԻԿԻ ՄԱՆԻՐ, ՄԱՆԻՐ (թարգմանություն)

Որտեղացի՞ ես, որտեղացի,
Ես քեզ ճանաչել չկարողացա,
Ժողովուրդը թշնամացավ,
Որ քեզ սիրեցի:

Կրկներգ.
Իլիկդ մանիր, մանիր,
Բուրդը քո մոր արածն է,
Դու ինձ այրեցիր,
Աստված էլ քեզ այրի:

Թողնելու եմ, գնալու եմ,
Այստեղից փախչելու եմ,
Հետևիցս նայիր,
Արտասուքս թափելու եմ:

Իմ տունը Քաթափլայում՝ է,
Գոխուլայի՞ դիմացն է,
Ես քեզ շատ սիրեցի,
Դու էլ ինձ սիրիր:

Տների վրա
Փաթիլ-փաթիլ ծյուն է գալիս,
Քո հոր բանջարանցից
Ինձ համար բանջար՝ քաղիր:

ՅԷ՛ ՄՕՄԻ՛

Յէ՛ մոմի, հաս թայի լերն ի վեր էրթօղ,
Գօվ գէթօղ, բօնիր էնօղ չէ՞ս թա,
Յէ՛ մոմի, դօնէ ջօթին նէստօղ,
Ինձ օնա փերթա քուրթա քօրծօղ չէ՞ս թա:

Յէ՛ բաթի՛, Ավջալինէ փօսին
Ցիյուն հէզնօղ, որթնալա էրթօղ չէ՞ս թա,
Յէ՛ բաթի՛, չօմին դագէ չազյան շինօղ,
Մէչէ մօմօվէ բարգօղ չէ՞ս թա:

Յէ՛ մոմի՛, բաղրաջօվէ մածուն թէնօղ,
Շիդաք հաջ փէշօղ, ուղօղ չէ՞ս թա,



Յէ՛ մոմի՛, փօնջար քաղօղ,
Հէդէ սօբան քօլօղ, գայիշօղ էփօղ չէ՞ս թա:

* * *

Յէ՛ բաթի՛, փօսին վաան նէստօղ՛,
Դարթի, դարթի ծիգաա խէնօղ չէ՞ս թա,
Յէ՛ բաթի՛, փերջուն ափէդ արնօղ,
Գօվօուն հէդէ հոյիվ էրթօղ չէ՞ս թա:

Խոսքը և երաժշտությունը՝
Ալթան Զիվելեբի

ՏԱՏԻ (թարգմանություն)

Տատի՞, այս տարի յայլա չե՞ս գնալու,
Կով չե՞ս կթելու, պանիր չե՞ս անելու:
Տատի՛, տան ծայրին չե՞ս նստելու,
Ինձ համար բրդի գուլպա չե՞ս գործելու:

Պապի՛, Ավջալայի՞ դաշտում
Ձի չե՞ս հեծնելու, քառատրուփ չե՞ս
գնալու,

Պապի՛, սոճիի տակ քոլիկ՛ չե՞ս
սարքելու,
Մեջը տատի հետ չե՞ս պառկելու:

Տատի՛, կաթսայի՞ մեջ մածուն չե՞ս
սարքելու,
Շիտակ հաջ՞ չե՞ս փշրելու, չե՞ս ուտելու:
Տատի՛, կաղամբ՞¹⁰ չե՞ս քաղելու,
Հետը վառարանը չե՞ս վառելու,
գայիշող՞¹¹ չե՞ս եփելու:

* * *

Պապի՛, դաշտում չե՞ս նստելու,
Վշտոտ, վշտոտ ծխախոտ չե՞ս ծխելու:
Պապի՛, փերջուն՞¹² ծեռքդ չե՞ս առնելու,
Կովերին հովվության չե՞ս գնալու:

Ծանոթագրություններ

- Քաթափա - խոսքի գավառի Քեմալ-փաշայի գյուղախմբի Քյուրուզու գյուղից վերև գտնվող անտառի անունն է, այնուհետև Ջեֆուքա սարն է: Այդ անտառում կան տներ, տնամերձեր, բանջարանոցներ, բնակիչները զբաղվում են նաև թեյամշակությամբ:
- Գոխուլա - Քյուրուզու գյուղի մոտ գտնվող դաշտի անունն է, որտեղ գյուղացիները բանջարանոցներ ու պարտեզներ ունեն: Նախկինում նաև տներ կային, այժմ բնակիչներն արտագաղթել են:
- Բնագրում՝ փօնջար - նշանակում է տերևակաղամբ, որը տարբերվում է մեզանում տարածված սպիտակագլուխ կաղամբից: Համշենցիները տերևակաղամբի տերևներն օգտագործում են տարբեր ճաշատեսակներ եփելիս:
- Ինչպես մեզ տեղեկացրեց Ալթան Զիվելեբը, իրականում երգն ունի 4 քառատող, բայց խտասկավառակ պատրաստելիս, հաշվի առնելով երգի տևողությունը, չորրորդ քառատողը չի երգվել: Մենք նպատակահարմար գտանք տպագրել երգն ամբողջությամբ:
- Բնագրում՝ Յէ՛ մոմի, յէ- հարգալից դիմելած է իզական սեռի ներկայացուցիչներին: Մօմի- մամիկ, մամ, տատ, տատիկ:
- Ավջալա - Շավշաթի գավառի Մէձ լեր (Մեծ յայլա) կոչվող սարատեղի ճանապարհին գտնվող մի դաշտի անունն է:
- Բնագրում՝ չազյա- կտրված ձյուղերից սարերում պատրաստվող ժամանակավոր կացարան, գիշերելու տեղ՝ քոլիկ, թողտիկ, հոլիկ, հյուղակ:
- Բնագրում՝ բաղրաջ (թուրքերեն՝ bakraç, բաքրաչ) — մետաղյա, պղնձե կաթսա, փոքր դույլ:
- Շիդաք հաջ — տանը թխված հաջ:
- Բնագրում՝ փօնջար (պօնջար) - կաղամբի տարատեսակ է՝ տերևակաղամբ (թուրքերեն՝ karalahana, քարալահանա), տարբերվում է սպիտակագլուխ կաղամբից:
- Գայիշող- փօնջարի՝ տերևակաղամբի տերևներով, ըստ ցանկության՝ նաև լոբիով, մսով, կարտոֆիլով եփված ջրիկ ճաշ:
- Փերջու- երկար պոչով, կեռ շեղքով կահին, լինում է մեծ և փոքր:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03Ա054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում իրումը «Ձայն համշենականին» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից: Տպագրվում է «ՆՏ Հոլդինգ» ՍՊԸ-ում:

“ДЗАЙН АМШЕНАКАН” (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации “АМШЕН” (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНИЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. “HAMSHEN” Compatriotic-charitable public organization (Yerevan). “DZAYN HAMSHENAKAN”. Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org